

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱԾԻ ԵՎ ԴԱՆԴԱՂՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

2024 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ

DOI: 10.52174/2579-2989_2024.4-5

Հիմնադրողներ. *SUS, արդյունաբերություն,
հանքարդյունաբերություն,
SS, շինարարություն*

Հոդվածում վերլուծվել է ՀՀ տնտեսության ակտիվության ցուցանիշը (SUS) հունվար-սեպտեմբերին: Ուսումնասիրությունն ընդգրկում է արդյունաբերության, առևտրի շրջանառության, շինարարության և ծառայությունների ոլորտների իրավիճակը: Թեև նշված բոլոր ճյուղերն ընդհանուր առմամբ աճ են ապահովել, սակայն տնտեսության համար այնպիսի առանցքային ոլորտներ, ինչպիսիք են հանքարդյունաբերությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, խմիչքների, հագուստի, քիմիական արտադրատեսակների արտադրությունը, անկում են ապրել՝ զսպելով SUS-ի աճը: Աճի և դանդաղման հիմքում, հիմնականում, արտաքին գործոններն են, սակայն որոշ ոլորտների, օրինակ՝ SS-ի անկման աստիճանը կարելի էր մեղմել՝ վարելով ավելի խելամիտ հարկային քաղաքականություն:

Լախորդ երկու տարիների՝ ՀՀ ներուժը մի քանի անգամ գերազանցող տնտեսական աճից հետո (ըստ տարբեր գնահատականների՝ ՀՀ երկարաժամկետ կայուն աճը 5%-ի շուրջ է տատանվում)՝ վերջին ամիսներին տնտեսության ակտիվության որոշակի դանդաղում է նկատվում: Ընդհանրապես, երկարաժամկետ տնտեսական աճի ներուժից զգալիորեն բարձր աճ հնարավոր է ապահովել կամ որակական փոփոխությունների՝ արտադրողականության զգալի աճի հաշվին, կամ արտաքին գործոնների ազդեցությամբ: 2022 թ.-ի երկնիշ և 2023 թ.-ի բարձր աճի հիմքում առավելապես արտաքին գործոններն էին, որոնց թուլացմամբ էլ պայմա-




Ռուզաննա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2018 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում: 2018-2020 թթ. սովորել է Texas A&M համալսարանի Ագրոբիզնեսի մագիստրատուրայում: Վերապատրաստվել է աշխարհի տարբեր երկրների համալսարաններում:

 <https://orcid.org/0000-0003-2226-6435>

¹ ՀՀ ԿԲ: Դրամավարկային քաղաքականության զեկոյց, 2024 թ. 3-րդ եռամսյակ, https://www.cba.am/AM/periodicals/MPR_2024Q3_Arm.pdf



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

2024 թ.-ի SU3-ը՝ 2023 թ.-ի նույն ամսվա նկատմամբ, %²

Նավորված՝ 2024 թ.-ի հունվար-օգոստոսին, ըստ ՎԿ հրապարակած տվյալների, SU3-ի աճի որոշակի դանդաղում է նկատվում, իսկ սեպտեմբերից սկսած՝ փոքր տեմպերով արագացում:

Գծապատկեր 1-ից նկատելի է, որ SU3-ի աճի շեշտակի դանդաղումը սկսել է մայիսին, որը պայմանավորված է ոսկու վերաարտահանման ալիքի մարումով: Այնուհետև, մայիսի համեմատ, հունիսին աճը մեծացել է, հուլիսին և օգոստոսին՝ դարձյալ դանդաղել, իսկ սեպտեմբերին՝ կրկին արագացել: 2024 թ.-ի հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ SU3-ը կազմել է 8.7%, սեպտեմբերը սեպտեմբերի համեմատ՝ 7%: SU3-ի աճին գերազանցապես նպաստել է առևտրի շրջանառության և արդյունաբերության, որոշակիորեն նաև ծառայությունների և շինարարության ոլորտների աճը:

Արդյունաբերության ոլորտի աճը թեև դրական է նախորդ տարվա սեպտեմբերի նկատմամբ, սակայն աճի տեմպը բավական դանդաղ է. 2024 թ. սեպտեմբերին 2023 թ. սեպտեմբերի նկատմամբ դա կազմել է ընդամենը 4.6%, այն դեպքում, երբ նախորդ տարվա սեպտեմբերին ոլորտում գրեթե նույնքան անկում էր գրանցվել,

և այս տարվա սեպտեմբերի աճը տեղի է ունեցել ցածր հիմքի վրա՝ փաստացի միայն հավասարվելով 2022 թ.-ի սեպտեմբերի մակարդակին: Արդյունաբերության աճը հիմնականում զսպել է «հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման» ենթաոլորտը, որը, 2021 թ.-ից սկսած, անկում է ապրում: 2024 թ. սեպտեմբերին անկումը նախորդ տարվա սեպտեմբերի նկատմամբ կազմել է 5.6%, հունվար-հուլիսին՝ 7.8%: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև անցած տարվա (2023 թ.) մայիսը Սոթքի հանքավայրում դեռևս ոսկի արդյունահանվում էր, ուստի հանքարդյունաբերության ենթաոլորտի հունվար-սեպտեմբերի անկումը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կարող է պայմանավորված լինել 2023 թ. մայիսից հանքի ժամանակավորապես փակ լինելով: Բացի այդ, ՎԿ հրապարակած տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հանքարդյունաբերության ենթաոլորտի անկման հիմնական «մեղավորներից» է նաև մոլիբդենի խտանյութի արդյունահանման՝ շուրջ 30% կրճատումը: Էականորեն կրճատվել են նաև որոշ այլ հանքային ոչ մետաղական արտադրատեսակների՝ կրի (15%), ցեմենտի (12%), գիպսի և գաջի (23%)

² ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2024 թ. սեպտեմբերին (2024 թ. հոկտեմբերի 25-ի դրությամբ), <https://www.armstat.am/file/doc/99551713.pdf>

արտադրության ծավալները: Դժվար է կանխատեսել, թե հանքարդյունաբերության անկումը դեռ որքան կտևի, սակայն սեպտեմբերին Սոթքի հանքավայրում ոսկու արդյունահանման վերսկսումը կարող է որոշակիորեն մեղմել իրավիճակը: Թեև հանքավայրը մինչև 2025 թ.-ի երկրորդ կեսը գործելու է ոչ ամբողջ նախագծային (տարեկան՝ 400 հազար տոննա), այլ տարեկան 100-150 հազար տոննային համարժեք հզորությամբ և փակ եղանակով³, այնուամենայնիվ, գոնե 2024 թ.-ի վերջին եռամսյակում, եթե այլ զարգացումներ տեղի չունենան, ենթադրություն կարող է նույնիսկ աճ ապահովվել՝ զսպելով տարեկան անկման չափը: Բացի այդ, Դաշնային պահուստային համակարգի կողմից հիմնական տոկոսադրույքի 0.5 տոկոսային կետով իջեցումը⁴, նաև հետագայում սպասվելիք իջեցումները և Չինաստանի տնտեսական աճի տեմպի վերաբերյալ մտավախության թուլացումը հնարավոր է հանգեցնեն պղնձի համաշխարհային գների աճին, որը ևս որոշակիորեն կզսպի ենթադրության անկումը: Այնուամենայնիվ, թեև Citigroup-ը հուլիսին կանխատեսում էր, որ պղնձի գինը երկարաժամկետում կհասնի 1 տոննայի համար 12 հազար դոլարի⁵, իսկ Goldman Such Group-ը նշում էր, որ 2025 թ.-ին դա կկազմի 15 հազար ԱՄՆ դոլար, սեպտեմբերին կանխատեսումները վերանայվել են, և, հաշվի առնելով Չինաստանի նվազող պահանջարկը, 5 հազար ԱՄՆ դոլարով իջեցվել է պղնձի համար կանխատեսվող համաշխարհային գինը⁶: Ուստի պղնձի գինը, համաձայն վերջին կանխատեսումների, կաճի շատ ավելի համեստ տեմպով, քան ակնկալվում էր ավելի վաղ, ու թեև դա դրական ազդեցություն կունենա Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի վրա, սակայն այդ ազդեցությունը մեծ չի լինի:

Անդրադառնալով մշակող արդյունաբերությանը՝ պետք է նշել, որ վերջինս, ի տարբերություն հանքարդյունաբերության,

սեպտեմբերին որոշակի՝ 6.5%, աճ է գրանցել, որը, սակայն, տեղի է ունեցել նախորդ տարվա ցածր հիմքի վրա (2023 թ.-ի սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ մշակող արդյունաբերությունը կրճատվել էր շուրջ 8%-ով), իսկ հունվար-սեպտեմբերին աճը կազմել է 18.9%: Գծապատկեր 2-ից կարելի է նկատել, որ աճին գերազանցապես նպաստել է հիմնական մետաղների արտադրությունը, որը նախորդ ժամանակաշրջանի համեմատ աճել է 3.3 անգամ: Մշակող արդյունաբերության աճին նպաստել է նաև ծխախոտի արտադրատեսակների արտադրությունը, որը թեև հունվար-սեպտեմբերին ավելացել է 11%-ով, սակայն նպաստումը մշակող արդյունաբերության աճին կազմել է ընդամենը 1.05 տոկոսային կետ: Շատ ավելի փոքր՝ 0.37 տոկոսային կետով իր դրական նպաստումն է ունեցել սննդամթերքի արտադրությունը, որը հունվար-հուլիսի անկումից հետո՝ հունվար-սեպտեմբերին 1.1% աճ է գրանցել: 0.25 տոկոսային կետով դրական նպաստում է ունեցել նաև ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրությունը: Մշակող արդյունաբերության աճին որոշակի դրական նպաստում են ունեցել նաև կահույքի, թղթի և թղթե արտադրատեսակների արտադրությունը, պոլիգրաֆիական գործունեությունը: 2024 թ.-ի հունվար-սեպտեմբերին մշակող արդյունաբերության աճին 0.7 տոկոսային կետի չափով նպաստել է էլեկտրոնային սարքավորումների արտադրությունը, որը թեև շատ փոքր մասնաբաժին ունի, սակայն նշված ժամանակահատվածում նախորդի համեմատ 62% աճ է ապահովել: Ի տարբերություն նշվածների, մշակող արդյունաբերության մյուս հիմնական ճյուղերը՝ խմիչքի արտադրությունը, այլ ոչ մետաղական հանքատեսակների արտադրությունը և քիմիական նյութերի արտադրությունը, զսպել են մշակող արդյունաբերության աճը համապատասխանաբար՝ 0.26, 1.74 և 0.24 տո-

³ Սոթքում կրկին ոսկի են արդյունահանում, բայց արդեն փակ եղանակով, <https://arm.sputniknews.ru/20240930/svotqum-krkin-voski-en-ardjunahanum-bajc-arden-pak-eghanakvov-manramasner--81257909.html>

⁴ Federal Reserve System <https://www.federalreserve.gov/newsevents/pressreleases/monetary20240918a.htm>

⁵ Copper price surpasses \$10,000, expected to rise further, says Citigroup, <https://www.mining.com/copper-price-to-retest-10000-t-soon-says-citi/>


⁶ Goldman cuts copper price forecast by \$5,000 as bullish bet closed, <https://www.mining.com/web/goldman-cuts-copper-price-forecast-by-5000-as-bullish-bet-closed/>

կոսային կետով: Գծապատկեր 2-ից կարելի է նկատել նաև, որ «ոսկու էֆեկտը» ոչ միայն ամբողջապես մարել, այլև 1.1 տոկոսային կետով զսպել է մշակող արդյունաբերության աճը: Բացի այդ, ԵՄ պատժամիջոցների 11-րդ փաթեթի կիրառումը, որը ներառում է ոչ միայն որոշ կազմակերպությունների և անձանց, այլև երրորդ երկրների միջոցով պատժամիջոցների շրջանցման կանխարգելման միջոցառումները⁷, խաթարել է դեպի ՌԴ մեքենաների, սարքավորումների, ինչպես նաև ավտոմեքենաների վերաարտահանման գործարքները, որոնք մեծ թափ էին ստացել ռուս-ուկրաինական պատերազմից ի վեր: Սա, իր հերթին, հանգեցրել է մեքենաների և սարքավորումների նորոգման ու տե-

ղադրման ճյուղի կրճատմանը, ինչի հետևանքով մշակող արդյունաբերության աճը զսպվել է 0.3 տոկոսային կետով:

Առևտրի շրջանառության ոլորտի տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ավտոմեքենաների առևտուրը հունվար-սեպտեմբերին կրճատվել է 7.3%-ով: Պատճառը, ինչպես արդեն նշել ենք, ԵՄ պատժամիջոցների խստացումն է՝ ուղղված երրորդ երկրների միջոցով դրանց շրջանցմանը:

Առևտրի շրջանառության ոլորտի, ինչպես նաև ՏԱՅ-ի գերակշիռ աճն ապահովել են մանրածախ և մեծածախ առևտրի շրջանառության ոլորտները՝ աճելով համապատասխանաբար՝ 9 և 27 տոկոսով: Ընդհանուր առմամբ, դիտարկվող ժամա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2



Հիմնական ճյուղերի մշակող արդյունաբերության աճին նպաստումները, 2024 թ. հունվար-սեպտեմբեր, տոկոսային կետ⁸

⁷ EU adopts 11th package of sanctions against Russia for its continued illegal war against Ukraine, https://ec.europa.eu/commission/presscorner/api/files/document/print/en/ip_23_3429/IP_23_3429_EN.pdf

⁸ Հաշվարկները կատարել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա, <https://www.armstat.am/am/?nid=157>

նակահատվածում առևտուրն աճել է 19.5%-ով:

Ծառայությունների ոլորտը ևս դրական նպաստում է ունեցել ՏԱՏ-ին, սակայն անհամեմատ փոքր չափով: Ոլորտի աճին մեծապես նպաստել է ֆինանսական և ապահովագրական գործունեությունը, իսկ ավելի փոքր չափով՝ կացության և հանրային սննդի կազմակերպումը, մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեությունը և ոլորտի մյուս բոլոր ճյուղերը, բացի տրանսպորտից ու տեղեկատվության և կապի ծառայություններից: Վերջինս, լինելով երկրորդ ամենամեծ ճյուղը (հունվար-սեպտեմբերին մասնաբաժինը կազմել է 17.6%), դիտարկվող ժամանակահատվածում 8.4% անկում է գրանցել: Դա հիմնականում պայմանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների ճյուղի անկումով, որը, թեպետ լինելով ռազմավարական ոլորտ, վերջին եռամսյակներին անկում է գրանցում: Մի կողմից՝ բարձր տոկոսադրույքները, տնտեսության հնարավոր դանդաղման վերաբերյալ մտահոգությունները և աշխարհագրական մարտահրավերները 2023 թվականին հանգեցրել են գլոբալ տեխնոլոգիական ծախսերի փոքրինչ նվազման⁹, իսկ մյուս կողմից՝ ՀՀ հարկային քաղաքականության փոփոխությունը՝ շահութահարկի 0% արտոնության կիրառման դադարումը 2023 թ. դեկտեմբերի 31-ից և 10% եկամտային հարկի նախատեսվող դադարումը 2024 թ. դեկտեմբերի 31-ից, լուրջ հարված են ուղարկին: Ի հակադրություն մեր հարկային քաղաքականության, հարևան Վրաստանը սահմանել է 1% հարկ այն ՏՏ ընկերությունների և անհատ ձեռնարկատերերի համար, որոնք տարեկան ստանում են մինչև 500,000 GEL (մոտ 190,000 ԱՄՆ դոլար) եկամուտ: Եթե եկամուտը գերազանցում է այդ սահմանը, ապա հարկային դրույքաչափը բարձրանում է մինչև 3%¹⁰: Այլ հավասար պայմաններում, ՀՀ-ում ոլորտին տրված հարկային արտոնությունների վերացումը և հարևան երկրի առաջարկած առավել

բարենպաստ հարկային ռեժիմը կարող էին հանգեցնել Հայաստան ժամանած բարձր որակավորում ունեցող աշխատուժի արտահոսքին: Նշված գործոնները, համադրվելով վերջին տարիների արժևորված դրամի հետ, հանգեցրել են ոլորտի անկմանը: Ի վերջո, հարկային քաղաքականությունը ոչ այնքան արդարության, որքան արդյունավետության մասին է, և համաշխարհային պահանջարկի թուլացման, արժևորված դրամի և այլ պետությունների կողմից առավել մրցակցային պայմաններ առաջարկվելու համապատկերում, հարկային արտոնության դադարեցումն անհեռատես քայլ էր, ինչը էականորեն խաթարում է ոլորտի աճի հնարավորությունը:

Տնտեսության ճյուղերից շինարարությունը թեև ամենաբարձր աճն է ապահովել, սակայն, ՏԱՏ-ի աճին նպաստման առումով, ամենահամեստ ներդրումն է ունեցել իր ցածր տեսակարար կշռի պատճառով: Շինարարության ծավալը 2024 թ.-ի հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 15.9%-ով: Շինարարության ծավալը գերազանցապես աճել է բնակչության (63.4%) և պետական բյուջեի (26.8%) եկամուտների հաշվին, մինչդեռ կազմակերպությունների միջոցներով կատարված շինարարությունն աճել է 2.7%-ով՝ պայմանավորված հիմնականում Երևանում, ըստ գոտիականության, եկամտային հարկի վերադարձի օրենքի արտոնության աստիճանական դադարեցմամբ և, 2024 թ.-ից սկսած, շինարարական թույլտվությունների տուրքերի և վճարների նոր փոփոխություններով: Եթե նախկինում 5000 ք. մ-ի համար կառուցապատողները պետք է վճարեին 500 հազար դրամ, ապա այժմ, ըստ նոր կարգի, այդ վճարը, կախված քաղաքում գտնվող տարածքի գոտուց, տարբեր է՝ բարձրանալով մի քանի անգամ¹¹: Այնուամենայնիվ, թեև կազմակերպությունների միջոցներով իրականացվող շինարարության ծավալի աճը փոքր է, սակայն,

⁹ 2024 technology industry outlook, Deloitte, <https://www2.deloitte.com/content/dam/Deloitte/us/Documents/technology-media-telecommunications/2024-tmt-outlook-technology.pdf>

¹⁰ Legal Insights with Klein Law: 1% Tax Rates for Entrepreneurs and Other Georgian Attractive Tax Rates, <https://georgiatoday.ge/legal-insights-with-klein-law-1-tax-rates-for-entrepreneurs-and-other-georgian-attractive-tax-rates/>

¹¹ ՀՀ Երևանի քաղաքի ավագանու N42-Ն որոշում, <https://www.irtek.am/views/act.aspx?aid=124219>

ի տարբերություն հունվար-հուլիս ժամանակաշրջանի, դրական է: Հատկապես մարզերում շինարարության ակտիվությունն աճել է, ինչը լավ միտում է, թեև ծավալներով էապես զիջում է Երևանին:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք նշել, որ թեև ՏԱՑ-ը աճում է, սակայն մայիսից օգոստոս դրա տեմպը դանդաղում է, և, միայն սեպտեմբերից սկսած, որոշակի արագացում է նկատվում: Այն արտաքին գործոնները, որոնք հանգեցրել էին բարձր աճի, աստիճանաբար մարում են: Տնտեսության այնպիսի կարևոր ճյուղեր, ինչպիսիք են հանքարդյունաբերությունը, տեղե-

կատվական տեխնոլոգիաների ոլորտը, մշակող արդյունաբերությունում խմիչքի արտադրությունը, հագուստի արտադրությունը, ինչպես նաև քիմիական արտադրատեսակների արտադրությունը, անկում են գրանցել, շինարարության ծավալը թեև աճել է, սակայն կազմակերպությունների միջոցներով կատարվող աշխատանքները դանդաղորեն են աճում: Հաշվի առնելով ՏԱՑ-ի տեմպերը և դրա աճը պայմանավորող գործոնները՝ կարող ենք կանխատեսել, որ 2024 թ.-ի 7% տնտեսական աճի թիրախը գուցե և հնարավոր չլինի ապահովել:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Երևանի քաղաքի ավագանու N42-Ն որոշում,
<https://www.irtek.am/views/act.aspx?aid=124219>
2. ՀՀ ԿԲ: Դրամավարկային քաղաքականության զեկույց, 2024 թ. 3-րդ եռամսյակ,
https://www.cba.am/AM/ppperiodicals/MPR_2024Q3_Arm.pdf
3. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2024 թ. սեպտեմբերին (2024 թ. հոկտեմբերի 25-ի դրությամբ),
<https://www.armstat.am/file/doc/99551713.pdf>
4. ՀՀ ՎԿ տվյալներ,
<https://www.armstat.am/am/?nid=157>
5. Սոթքում կրկին ոսկի են արդյունահանում, բայց արդեն փակ եղանակով,
<https://arm.sputniknews.ru/20240930/svotqum-krkin-voski-en-ardjunahanum-bajc-arden-pak-eghanakvov-manramasner--81257909.html>
6. Copper price surpasses \$10,000, expected to rise further, says Citigroup,
<https://www.mining.com/copper-price-to-retest-10000-t-soon-says-citi/>
7. Goldman cuts copper price forecast by \$5,000 as bullish bet closed,
<https://www.mining.com/web/goldman-cuts-copper-price-forecast-by-5000-as-bullish-bet-closed/>
8. EU adopts 11th package of sanctions against Russia for its continued illegal war against Ukraine,
https://ec.europa.eu/commission/presscorner/api/files/document/print/en/ip_23_3429/IP_23_3429_EN.pdf
9. Federal Reserve System
<https://www.federalreserve.gov/newsevents/press-releases/monetary20240918a.htm>
10. Legal Insights with Klein Law: 1% Tax Rates for Entrepreneurs and Other Georgian Attractive Tax Rates,
<https://georgiatoday.ge/legal-insights-with-klein-law-1-tax-rates-for-entrepreneurs-and-other-georgian-attractive-tax-rates/>
11. 2024 technology industry outlook, Deloitte,
<https://www2.deloitte.com/content/dam/Deloitte/us/Documents/technology-media-telecommunications/2024-tmt-outlook-technology.pdf>

Рузанна ТАДЕВОСЯН

Младший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ

ПУЛЬС ЭКОНОМИКИ

**ПРИЧИНЫ РОСТА И ЗАМЕДЛЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОЙ АКТИВНОСТИ:
ЯНВАРЬ-СЕНТЯБРЬ 2024 Г.**

В статье анализируется показатель экономической активности (ЕАА) Армении за период с января по сентябрь 2024 года. Исследование охватывает состояние промышленности, торгового оборота, строительства и сферы услуг. Хотя все эти секторы в целом способствовали росту, ключевые области, такие как горнодобывающая промышленность, информационные технологии, производство напитков, а также химических изделий, испытали снижение, что сказалось на росте ЕАА. Как рост, так и его замедление в основном обусловлены внешними факторами, хотя степень падения в некоторых секторах, таких как ИТ, могла бы быть смягчена более разумной налоговой политикой.

Ключевые слова: ЕАА, промышленность, горнодобыча, ИТ, строительство

Ruzanna TADEVOSYAN

Junior Researcher at «Amberd» Research Center, ASUE

PULSE OF ECONOMY

**CAUSES OF ECONOMIC ACTIVITY GROWTH AND SLOWDOWN:
JANUARY-SEPTEMBER 2024**

The paper analyzes the economic activity indicator (EAI) of Armenia from January to September 2024. The study encompasses the state of the industry, trade turnover, construction, and service sectors. While all of these sectors have generally contributed to growth, key areas such as mining, information technology, beverage production, chemical products manufacturing, and clothes manufacturing have experienced declines, impacting the growth of the EAI. Both the growth and slowdown are primarily driven by external factors, although the degree of decline in some sectors, such as IT, could have been mitigated through a more prudent tax policy.

Keywords: EAI, industry, mining, IT, construction

